

«Փ.Աբաջյան» ՍՊԸ

արտադրանքի սերտիֆիկացման մարմին

Իրավաբանական հասցեն՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Ե.Չարենցի 27, բն. 3

Գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Աշտարակի խճղ. 2ա

Սերտիֆիկացման մարմնի հավատարմագրման ոլորտը

Հ/Հ	Փորձարկվող արտադրանքի անվանումը	ԱՏԳ ԱԱ կոդը
1	2	3
1	Ավազ շինարարական աշխատանքների համար	2505
2	Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար	2517
3	Խիճ, կոպիճ, ավազ արհեստական ծակոտկեն. Խիճ և ավազ ծակոտկեն լեռնային ապարներից Հրաբխածին ապարներից բնական ծակոտկեն լցիչներ բետոնների համար	2530 2517
4	Խառնուրդներ բետոնի	3824
5	Պորտլանդցեմենտ և խարամապորտլանդցեմենտ. Ցեմենտ շինարարական շաղախների համար. Պորտլանդցեմենտ գունավոր. Պորտլանդցեմենտ ցեմենտներ. Ցեմենտներ սուլֆակայուն, կավահողային և բարձրակավահողային. Հանքային կապակցանյութեր	2523 3816
6	Շաղախներ շինարարական	3824
7	Բետոններ ծանր և մանրահատիկային, բետոններ թեթև	3824
8	Բետոնե և երկաթբետոնե պատրաստվածքներ շինանարարական հավաքովի,բացի որմնապանելներից, կղմինդր	6810 9406
9	Պողպատյա, ցինկապատ (տՐՏԷՎՈՐՑՈՍ), մետաղական պատրաստվածքներ, եռակցված միացքներ, կոնստրուկցիաներ և պատրաստվածքներ	7905 7904 7907 7213 7214 7301 7304 7305 7306 7308 7309
10	Բետոնե ամրանավորման համար օգտագործվող պողպատե արտադրանք	7213 7214 7217 7312
11	Շինարարական քարեր, երեսապատման սալեր, որմնաքարեր լեռնային ապարներից, ճարտարապետաշինարարական արտադրանք	2515 2516 6802 6801 6806 4418
12	Բիտումային մածիկ՝ այդ թվում հիդրոմեկուսիչ	2713 2715
13	Հավելանյութեր բետոնների և շինարարական խառնուրդների համար	3824
14	Էլեկտրոդներ՝ էլեկտրաաղեղային եռքի համար	8311
15	Աերողորմայի ճանապարհային, ասֆալտբետոնե օրգանահանքային խառնուրդներ և ասֆալտբետոն	2714 2714 2715

16	Պոլիմերային արտադրանք խողովակներ	3917
17	Գիպսաստվարաթուղթ	4810
18	Լաքեր և ներկեր	3209 3208
19	Հիդրոմեկուսիչ, ջերմամեկուսիչ շինարարական նյութեր, բիտումային էմուլսիա	2714 2715 6807
20	Չոր շինարարական խառնուրդներ	3214 2517
21	Մածիկներ ջրային հիմքի վրա	3214
22	Հիմնաշերտ սվաղների համար «Բետոնկոնտակտ»	3214
23	Սոսինձներ	3201 3502 3503 3505 3506
24	Պերլիտային խիճ և ավազ փքապերլիտի արտադրության համար	2517
25	Գրունտներ	-
26	Գաջ, գիպսային կապակցանյութեր	2520
27	Ջերմամեկուսիչ շինարարական նյութեր և շինվածքներ	6806 6807 6811 4807 4808 4811

«Փ. Աբաջյան» ՍՊԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմինն ունի 35 քառ. մ տարածք:

Սերտիֆիկացման մարմնի հավատարմագրման ոլորտը նախորդի համեմատ չի փոփոխվել: Սերտիֆիկացման մարմինը հավատարմագրված է եղել 2006 թվականից, վերջին հավատարմագրման ժամկետն է 2009-2012թ.: «Փ. Աբաջյան» ընկերությունը 2011թ Կիևում արժանացել է շինարարական ոլորտում որակի վերահսկողության «Top Ten Award» մրցանակին:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

արտադրանքի սերտիֆիկացման մարմնի
համապատասխանության գնահատման

ք. Երևան

2011.12.29.

«Փ.Աբաջյան» ՍՊԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմնում 2011թ-ի դեկտեմբերի 29-ին համաձայն հավատարմագրման գործակալության պետի առ 2011.12.28 N 47 կարգադրագրի Հանձնաժողովը հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝

Ս.Թորոսյան – ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի
ինժեներատեխնիկական աշխատանքների և տեխնիկական նորմավորման
մեթոդաբանության վարչության տեխնիկական նորմավորման
մեթոդաբանության բաժնի առաջատար մասնագետ /համաձայնությամբ/

Հանձնաժողովի անդամներ՝

Բ. Թունյան – «ԼԱԼՎԱՐ ԹԵՍԹ» ՍՊԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմնի ղեկավար
/համաձայնությամբ/

Ֆ.Հայրյան – «ԱՆՆԱ» Սպառողների Ազգային Ասոցիացիա հասարակական կազմակերպության մոնիթորինգի
և մարքեթինգային հետազոտությունների բաժնի պետ /համաձայնությամբ/

Ա.Սարգսյան - Հայաստանի «Սպառողների Ասոցիացիա» հասարակական կազմակերպության փորձագետ
/համաձայնությամբ/

Ն. Համբարձումյան - Հավատարմագրման գործակալության գլխավոր մասնագետ

անցկացրեց «Փ.Աբաջյան» ՍՊԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմնի համապատասխանության գնահատում, ըստ դրա գտնվելու վայրի:

Գնահատման ժամանակ պարզվել է.

- «Փ.Աբաջյան» ՍՊԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմինը գործում է իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող «Փ.Աբաջյան» ՍՊԸ կազմում: Մարմնի անձնակազմի վարձատրությունը կախված չէ տրված սերտիֆիկատների քանակից և արդյունքներից:
- Սերտիֆիկացման մարմինն իրականացնելու է շինարարական արտադրանքի համապատասխանության հավաստման աշխատանքներ:
- Ընկերության կազմում գործում է հավատարմագրված «Փ.Աբաջյան» ՍՊԸ փորձարկման լաբորատորիա:
- Ընկերությունն ապահովված է հավատարմագրմանը ներկայացված ոլորտում գործունեության համար անհրաժեշտ տարածքով, անձնակազմով:
- Սերտիֆիկացման մարմնի փորձագետները ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՓԲԸ ուսումնական կենտրոնում անցել են որակավորման դասընթացներ և ստացել հավատարմագրման ոլորտին համապատասխան փորձագետի որակավորում և տիրապետում են համապատասխանության հավաստման գործընթացին:
- Սերտիֆիկացման մարմինն ապահովված է համապատասխանության հավաստման գործընթացի իրականացման համար անհրաժեշտ իրավական ակտերով և ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով: Սերտիֆիկացման մարմնում ներդրված է ԻՍՕ 9001:2008 ստանդարտի պահանջներին համապատասխան որակի կառավարման համակարգ:

- Ընկերության կողմից սահմանված է պատվիրատուներից և այլ կողմերից համապատասխանության հավաստմանն առընչվող բողոքների քննարկման կարգ:
- Սերտիֆիկացման մարմնում առկա են ՀՍ 5.6-2006 ազգային ստանդարտի պահանջներին համապատասխան գրանցամատյաններ:
- Սերտիֆիկացման մարմնում երաշխավորված է համապատասխանության հավաստման գործընթացի հետ կապված տեղեկատվության գաղտնիության ապահովումը:

Հանձնաժողովն առաջարկում է

«Փ.Աբաջյան» ՍՊԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմնի հավատարմագրման համար ներկայացված հայտը քննարկել հավատարմագրման խորհրդի նիստում՝ հավատարմագրելու որոշում ընդունելու համար:

Եզրակացություն

«Փ.Աբաջյան» ՍՊԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմինը բավարարում է հավատարմագրման չափանիշներին՝ «Համապատասխանության գնահատման մասին» ՀՀ օրենքի պահանջներին և կարող է հավատարմագրվել որպես արտադրանքի սերտիֆիկացման մարմին: